

2126.11/2937



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ո. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ- 0 0 5 1-21

Ձեռնարկողը՝

«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Խորենացի 27, բն 64

Գործունեությունը՝

**Թաղամիրի ոսկու երևակման տարածքում 2020-2023թթ.
իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ **0 0 5 1 - 2 1**

< 15 > 03 2021թ.

Սյունիքի մարզի Թաղամիրի ոսկու երևակման տարածքում 2020-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ԱՏ- ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզ, Մեղրի համայնքի Լիճք
քնակավայր

Ներածական մաս. Թաղամիրի հանքերևակման տեղամասը գտնվում է Սյունիքի մարզում, Լիճք գյուղի վարչական տարածքում, Մեղրի գետի վերին հոսանքներում՝ 1530-2300մ բացարձակ նիշի բարձրություններում: Այն տեղակայված է Մեղրի քաղաքից 16կմ հյուսիս, Լիճք գյուղից 2,5կմ արևելք, իսկ Այգեձոր ավանից՝ 7 կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքը զբաղեցնում է երկու տեղամաս՝ ընդհանուր՝ 290.2հա մակերեսով, որից առաջինը՝ 123.9 հա է, երկրորդը՝ 166.3 հա:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ներկայացված հայտի նախատեսվում է Սյունիքի մարզի Թաղամիրի հանքերևակման տեղամասի գնահատում՝ երկրաբանական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական, լեռնահորատման համալիր աշխատանքների արդյունքներով ոսկու և դրան ուղեկից տարրերի արդյունաբերական C_1 և C_2 կարգերով պաշարների եզրագծում և հաշվարկում, P_1 կարգով կանխատեսումային ռեսուրսների գնահատում, հանքանյութի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրում՝ լաբորատոր և գործարանային պայմաններում:

Տեղամասերի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով հետևյալն են՝



Թաղամիր 1			Թաղամիր 2		
Կետի համարը	X	Y	Կետի համարը	X	Y
1	4327926	8604325	1	4326394	8604330
2	4327928	8605762	2	4326440	8605241
3	4327737	8605901	3	4325894	8605368
4	4326889	8605544	4	4325611	8604970
5	4326886	8605068	5	4325167	8604996
6	4327193	8605049	6	4324340	8605006
7	4327241	8604306	7	4324032	8604488
			8	4325330	8604218
			9	4325766	8604430

Տեղանքում դրվում են 20մ քայլքով փայտե կամ մետաղական պիկետներ: Պիկետի վրա գրվում են հետախուզագծերի և կետերի համարները: Պիկետների տեղադրմանը զուգահեռ կատարվելու են լիթոերկրաքիմիական նմուշարկում և տարածական երկրաֆիզիկական աշխատանքներ, ինչպես նաև հանքակիր առաջացումների հանքակտորային և բեկորային նմուշարկմամբ երկրաբանական որոնողական երթուղիների անցում:

Երկրաբանական որոնողական երթուղիները.

Անմիջապես դաշտային պայմաններում կատարվելու է նմուշի նախնական մշակումը, որն իր մեջ ընդգրկում է դրանց փաթեթավորումն ու ռեեստրների կազմումը:

Թաղամիրի հանքերևակման տարածքում նախատեսվում է երկրաբանական որոնողական երթուղիների անցում՝ հանքակտորային ու բեկորային նմուշարկումով ոչ ռեզուլյար ցանցով՝ 20գծ.կմ ընդհանուր երկարությամբ առանց երկրաբանական քարտեզի կազմման:

Նախատեսվում է յուրաքանչյուր 1գծ.կմ-ից 1 հանքակտորային և 10 բեկորային նմուշների վերցնում, որոնց ընդհանուր քանակությունը կկազմի 20 բեկորային և 200 հանքակտորային նմուշ:

Հանքայնացման բնույթը տարածման մակերևույթում ուսումնասիրելու համար հանքերևակման տարածքում մի քանի մարմիններով անցկացվելու է մինչև 400մ ընդհանուր երկարությամբ խրամներ՝ 3մ խորությամբ և մինչև 5մ լայնությամբ:

Նախատեսվող խրամների ընդհանուր ծավալը կկազմի 6000մ³:

Հորատման աշխատանքները կատարվելու են պոտենցիալ հանքայնացված գոտիների հայտնաբերման համար՝ ըստ հզորության եզրագծման ու խորքային հետապնդման:

- **Հորատահանուկի տեղափոխումը և ընդունումը.** Հորատահանուկի տեղափոխումը հորատող հաստոցից դեպի ժամանակավոր պահպանման վայրը կատարվելու է դրա ամբողջականության պահպանման պայմանով: Հորատահանուկի բոլոր արկղերը ծածկվելու են կափարիչով՝ քարային զանգվածի թափվելուց և հորատման երթերի պիտակները խառնելուց խուսափելու համար,

- հանքային գոտիներից հորատահանուկի նվազագույն թույլատրելի ելքը կազմելու է 95%-ից ոչ պակաս, իսկ կողային ապարներում՝ 90%-ից ոչ պակաս,

- հորատանցքի թեքությունը՝ 50-90°,

- շեղումը նախագծային ազիմուտից հորատանցքի փողի յուրաքանչյուր կետում կազմելու է



50-ից ոչ ավել,

- հորատանցքերի խորությունը լինելու է 50մ-ից մինչև 100մ,
- յուրաքանչյուր հորատանցքի ճշգրիտ պարամետրերը որոշվելու են երկրաբանա-տեխնիկական հանձնարարականով և տեղադրման ակտով,
- հորատանցքի վթարային վիճակի դեպքում թույլատրվում է կիրառել հորատման պահեստային տրամագիծը:

Հեռանկարային տեղամասերում, ընդհանուր առմամբ նախատեսվում է հորատել 50-ից մինչև 100մ 65 հորատանցք՝ ընդհանուրը 4600 գծ.մ ծավալով:

Հորատմանը համակից աշխատանքներ. Ամրակապող խողովակների կապում և հեռացում՝ յուրաքանչյուր հորատանցքի համար միջինը 10մ, ընդամենը 650մ:

- Հորատող հաստոցի տեղադրում և հանում – 65 հաստոց:
- Հորատման աշխատանքների ծավալն ըստ հորատանցելիության կարգերի կարող է բաժանվել հետևյալ կերպ.

VII կարգի ապարներ – 1150 գծ.մ.;

VIII կարգի ապարներ – 2300 գծ.մ.;

IX կարգի ապարներ – 1150 գծ.մ.:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները՝ դրանք վերանորոգելով:

Նախատեսվում է 4-րդ կարգի ապարներում 65 հորատման հարթակների և դրանց մոտեցման ճանապարհների մեխանիկական եղանակով կառուցում:

Հորատահանուկ նմուշարկումը. Հորատանցքի հորատահանուկից վերցվում են հանուկային և բեկորային նմուշներ, նմուշների սահմանները և համարները գրվում են մարկերով արկղների պատերին: Յուրաքանչյուր նմուշի վրա դրվում է 2 պիտակ. մեկը դրվում է նմուշով պարկի մեջ, մյուսը՝ արկղի: Նմուշներում պետք է հաճախակի կատարվեն փորձարկումներ՝ ծավալային կշռի չափումներով:

Հանուկային նմուշարկման ենթարկվում են երկրորդային փոփոխությունների, սուլֆիդային հանքայնացման, տեկտոնական խախտումների, երակների և ինտրուզիվ մարմինների հետ կոնտակտների բոլոր գոտիները: Հանուկային նմուշի երկարությունը պետք է լինի մոտ 1մ և չպետք է փոքր լինի 0.5մ-ից և ավել՝ 1.5մ: Դաշտային կրկնօրինակների քանակը՝ 5%: Նմուշարկվելու է ամբողջ հանուկի մոտ 30%: Ընդամենը վերցվելու է 1400 հանուկային նմուշ:

Բեկորային նմուշները տրվում են միջինը 3մ երկարությամբ հատվածներով և վերցվում են արմատական ապարների մինչև 5սմ չափի կտորների բեկորատման մեթոդով՝ նմուշարկման գծի երկարությամբ մոտ 10սմ պարբերականությամբ:

Ընդամենը հորատահանուկից վերցվելու է 1533 բեկորային նմուշ:

Ծրագրով նախատեսվում է 20 քերծվածքային նմուշների վերցնում՝ հանքային մարմնի ամբողջ մակերեսով: Քերծվածքի խորությունը պետք է լինի 5սմ-ից ոչ պակաս:

Ակոսային նմուշարկման հսկողության նպատակով նախատեսվում է կատարել համախառն նմուշարկում: Համախառն նմուշարկումը կատարվում է ակոսային նմուշարկումից հետո:

Նմուշի չափերն ընդունվում են 1x1x0.5մ:



Հանույթից հետո տեղում որոշվում է համախառը նմուշի իրական ծավալները՝ հետագայում նաև օգտակար հանածոյի զանգվածը որոշելու նպատակով: Մեկ նմուշը կկազմի՝ $(1 \times 1 \times 0.5) \times 2.8 \text{ տ/մ}^3 = 1.4 \text{ տ}$:

Համախառը նմուշի մշակումն իրականացվելու է ձեռքով, քառաբաժանմամբ, մեկ նմուշի քաշը հասցնելով մինչև 87.5 կգ, որից մեխանիկական մշակումից հետո վերցվում է 1 նմուշ լաբորատոր փորձարկումների համար: Նախատեսվում է վերցնել 10 համախառը նմուշ:

Հանքային մարմինների հանքաքարի տարատեսակները և դրանց միներալոգիական կազմը ճշտելու նպատակով ծրագրով նախատեսվում է 30 մոնոմիներալային նմուշների կազմում, դաշտային պայմաններում՝ արհեստական սղկվածներից, որոնք կներառեն հանքային գոտիների ողջ մերկացված հզորությունը:

Հանքաքարի ծավալային զանգվածն անհրաժեշտ է որոշել ըստ հանքաքարի տարատեսակների, նույն նմուշներով որոշելով հանքաքարի խոնավության չափը: Ծավալային զանգվածի որոշման համար վերցված նմուշները պետք է ենթարկվեն նաև միներալոգիական ուսումնասիրության և քիմիական անալիզների:

Նախատեսվում է հետազոտման ենթարկել 30 մենաքարային և 10 համախառը նմուշ: Նախատեսվում է բոլոր հորատանցքերում իրականացնել դիտարկումներ՝ ջրարբի հորիզոնների առկայությունը պարզելու նպատակով, միաժամանակ ուսումնասիրելով ջրի որակը, կատարել հանքաքարի և ներփակող ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություններ:

Տեխնոլոգիական կարիքների համար ջուրը նախատեսվում է վերցնել գարնանը տեղի աղբյուրներից, իսկ դրանց սակավության պայմաններում՝ տվյալ աշխատանքների մերձակայքում հոսող վտակներից նախապես կազմակերպելով ջրոգտագործման թույլտվությունը:

Նմուշների մաղումը և մանրացումը. Առաջնային պիտակներով նմուշները լցված պոլիէթիլենային գրիպերներում, փաթեթավորված տուփերի մեջ, յուրաքանչյուրում 50-100 հատ և ուղարկվում են լաբորատորիա: Յուրաքանչյուր տուփին կցվում է նմուշի ռեեստրը:

Անալիզների տեսակները. Փուխր նստվածքներից, լեռնային ապարներից և հանքային առաջացումներից վերցրած նմուշներում մետաղների պարունակությունները որոշելու համար օգտագործվելու են բարձր ճշգրտության անալիտիկ մեթոդներ՝ (ICP-AES, AA, հարգորոշիչ ICP-, AA- և գրավիամետրական ավարտով) ոսկու, արծաթի և բազմամետաղային հանքայնացման հիմնական տարրեր – ինդիկատորներ (ընդամենը 1200 նմուշ):

Բոլոր լեռնային փորվածքները և հորատանցքերը ենթարկվելու են γ -պրոֆիլացման և γ -կարոտաժի: Դիտարկման կետերի ֆիքսումը իրականացվելու է համաձայն գործող նորմերի՝ առումներում 2 կետ 1մ³ վրա:

Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- առումների γ -պրոֆիլացում – 7 680մ³,
- խրամների γ -պրոֆիլացում – 6 000մ³,
- հորատանցքերի ինլինոմետրիա և γ -կարոտաժ – 4 600 գծ.մ:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի (MKC-AT1117M) էտալոնացում և զգայունության ստուգում:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները՝ դրանք նորոգելով:





- բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս,
- յուրաքանչյուր լեռնային փորվածքի, հորատման հարթակի ու մոտեցման ճանապարհի շինարարության նոր տեղամասում աշխատանքները սկսել կենսաբանի կողմից տեղանքը զննելուց և անհրաժեշտության դեպքում համապատասխան կենսաբազմազանության պահպանության միջոցառումները կատարելուց հետո,
- ապամոնիտաժել ժամանակավոր կառույցները, ուսումնասիրվող տարածքից դուրս բերել շինարարական աղբը և չօգտագործված նյութերը,
- Խախտված հողերի ռեկուլտիվացիա. տեխնիկական ռեկուլտիվացիա, մակերեսների և դարավանդների հարթեցում և տոփանում, բերրի հողաշերտի փոում, կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացում,
- գործունեության տարածքում և շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքերի, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետերի մշտադիտարկում՝ ամսական մեկ անգամ,
- հանքափոշու, այդ թվում՝ ծանր մետաղների և կախյալ մասնիկների մշտադիտարկում՝ շաբաթը մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ,
- հողերի քիմիական կազմի մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
- հողերի կազմաբանության /կալի պարունակություն, ըստ մասնիկների չափերի բաշխում, ջրակլանում/ մշտադիտարկում՝ ամսական մեկ անգամ,
- հումուսի պարունակության մշտադիտարկում՝ ամսական մեկ անգամ,
- հողերում նավթամթերքների պարունակության մշտադիտարկում՝ ամսական մեկ անգամ,
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, արգելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Մեղրի համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության, նախարարությունները, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:



Յու. Մատինյան